Լեւոն մանուկ՝ որդի Օշնոյ՝ իշխեաց ամս ԻԲ։ Յամի տեառն ՌՅԼԲ. Թէմուրտաշ Թաթարն եկեալ ՚ի Սիս ԼՌ. ձիաւորօք եւ երեք դաս հետեւակօք, զոմանս կոտորեաց, եւ զոմանս գերի վարեաց։ Շատ ջանաց զգլխակս եւ զկայս ինչ առնուլ, եւ ոչ կարաց. եւ դարձաւ յետս Մըսրցին ԽՌ. ձիաւորօք, ԽՌ. հետեւակօք, եւ մեծաւ աշխատանօք էառ զԱյաս եւ կործանեաց։ Իսկ լուեալ Պապն Հռոմայ, ԼՌ. ոսկի յուղարկեաց եւ առատ ընծիւք նորոգեաց սփոփելով զՀայս։ Իսկ յետ ՃԺ. ամի կրկին եկեալ Մըսրցին էառ զԱյաս։

Կոստանդին՝ ազգական Լեւոն թագաւորի՝ որդի Պաղտին մարաջախտի՝ իշխեաց ամս Է։

Ճիւան՝ հօրեղբօրորդի Լեւոնի. սա Պայլ կոչեցաւ. իշխեաց ամ մի։

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան